

ՈՒԺ ԳՏՆԵԼ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ

Վերամիավորվել Աստծո հետ

Մաս 4

«Վախ ու սարսափ եկավ մեզ վրա՝ ավերումն ու կոտորած: Ջրի գետեր է թափում իմ աչքը իմ ժողովրդի կործանման պատճառով:» Երեմիայի Ողբեր 3:47-48

«Աչքերս մաշվեցան արտասուքով, աղիքներս բորբոքվել են, լեարդս գետինը թափվեցավ իմ ժողովրդի կործանման պատճառով:» Երեմիայի Ողբեր 2:11

Ինչպե՞ս ուժ գտնել շարունակելու քայլել Աստծո հետ
Ի՞նչ արեց Երեմիան

1- Կենտրոնացրու ուշադրությունդ Աստծո վրա

«Առանձին նստում և լռում է, որովհետև լուծ դրվեցավ նրա վրա: Նա իր բերանը հողին է դնում, գուցե լույս կլինի:» Երեմիայի Ողբեր 3:28-29

«Դու երբոր աղոթք անես, մտիր քո սենյակը և դուռդ փակած աղոթք արա դեպի քո Հայրը, որ ծածուկումն է, և քո հայրն՝ որ ծածուկ տեղը տեսնում է, հայտնապես կ'հատուցանի քեզ:» Մատթեոս 6:6

2- Խնդրիր, որ Աստված վերցնի վախերդ

«Կանչեցի քո անունը, ով Տեր, խորագույն գուրիցը: Չայնս լսեցիր, մի ծածկիր ականջդ իմ հառաչանքին՝ իմ աղաղակին: Դու մոտեցար՝ ես քեզ կանչած օրը, ասեցիր՝ Մի վախենաք:» Երեմիայի Ողբեր 3:55-57

«Ես խնդրեցի Տիրոջը, և նա պատասխան տվավ ինձ, և իմ ամեն ահ ու վախիցն ազատեց ինձ:» Սաղմոս 34:4

3- Հավատա, որ Աստված պիտի վերականգնի քեզ

«Մեզ դարձրու, ով Տեր, դեպի քեզ, և մենք կ'դառնանք. նորոգիր մեր օրերը առաջվա պես:» Երեմիայի Ողբեր 5:21

«Եթե որ ես հաստատ չ'հավատայի թե Տիրոջ բարությունը կ'տեսնեմ կենդանյաց երկրումը:» Սաղմոս 27:13

«Բարի է Տերը իրան հուսացողներին՝ այն անձին որ նրան որոնում է: Լավ է հուսալ և սպասել լռությունով Տիրոջ փրկությանը:» Երեմիայի Ողբեր 3:25-26

4- Հիշիր այն, ինչ երբեք չի փոխվում

- Ամեն ինչ Աստծո ձեռքերում է

«Մրա համար մեր սիրտը նվաղած է, սրանց համար խավարվեցան մեր աչքերը: Դու, ով Տեր հավիտյան կաս, քո աթոռը ազգից ազգ է:» Երեմիայի Ողբեր 5:17,19

- Աստված շարունակում է սիրել ինձ

«Հիշիր իմ տառապանքը ու իմ իմ թշվառությունը, օշինդը և դառնությունը: Լավ հիշում է իմ հոգին և խոնարհվում է ինձանում: Մրանք ես իմ միտքն եմ բերում, ուրեմն և հույս ունեմ: Տիրոջ ողորմություններն են որ չվերջացանք, որովհետև չպակասեցան նրա գթությունները: Նրանք ամեն առավոտ նորանոր են: Մեծ է քո հավատարմությունը:» Երեմիայի Ողբեր 3:19-23

- Ես ունեմ միայն Աստծո կարիքը

«Իմ բաժինը Տերն է, ասեց իմ հոգին, սրա համար նրան եմ հուսանալու:» Երեմիայի Ողբեր 3:24